բիւրներին, որտեղից մաքուր ու պարզ բխում է ճշմարտութիւնը: Նրա ժամանակում կանոնաւոր դպրոցներ չկային, այլ կային միայն անհատներ, որոնք իրանց չքաւոր գիտութեանը այնքան մեծ նշանակութիւն էին տալիս եւ այնքան թանկ գնով էին վաճառում, որպէս մի քուրմ իր սրբութեանը: Դրանց մօտ պէտք էր շատ տարիներ սպասաւորել եւ նրանց բոլոր հաճոյքը կատարել, մինչեւ նրանք արժանի կը համարէին մի փոքր մասն տալ իրանց գիտութիւնից:

Բայց տէր Եղիշէն առողջ դատողութեան տէր մարդ էր: Երկարամեայ փորձերը, ամէն տեսակ անձանց հետ շփոիլը՝ առաջ էին բերել նրա մէջ բոլորովին ինքնուրոյն համոզմունքներ, եւ նրա բոլոր գաղափարները, թէեւ ըստ մեծի մասին անճիշտ, բայց իր սեփական մտածութեան արդիւնք էին: Վերադառնալով իր հայրենիքը, Վան, նա հանդիպեց Հայրիկին, որի հետ իսկոյն բարեկամացաւ եւ որի ազդեցութեան ներքոյ բոլորովին ուրիշ ուղղութիւն ստացաւ: Այստեղ նա վճռեց իրան նոիրել մանուկների կրթութեան գործին եւ, մտածելով, որ իբրեւ կրօնաւոր, աւելի հեշտ կը լինի իրան գործել ժողովրդի մէջ, ձեռնադրուեցաւ քահանայ: Որպէս քահանայ, նա հրաժարուեցաւ ծուխից, հրաժարուեցաւ եւ այն արդիւնքներից, որ իւրաքանչիւր քահանայ ստանում է իր ծուխից: Այդ արեց նա այն մտքով, որ փոքր-ինչ անկախ դիրք ստանայ եւ, մանաւանդ, որ ընդհարումներ չունենայ միւս եկեղեցականների հետ, որը անխուսափելի է դառնում, երբ մէջտեղում շահերի խնդիր կայ: Նա բաւականացաւ մի փոքրիկ օրիորդական դպրոցով, որ պահում էր իր տան մէջ: Այս առաջին օրիորդական դպրոցն էր, որ բացուեցաւ Վանայ մէջ, բայց որպէս առաջինը եւ որպէս մի նոր եւ անսովոր հիմնարկութիւն, նրա կեանքը կարճատեւ եղաւ: Սկզբում նոյնիսկ քահանաները եղան, որ գրգռեցին հասարակութեան տգիտութիւնը նրա դէմ, ցոյց տալով ուսումը աղջկանց համար՝ մի անբարոյականացնող ձեռնարկութիւն: Քաղաքի սրբազան առաջնորդը, որ կարող էր խաղաղացնել հասարակութեան յուզմունքը, ինքը աւելի բորբոքեց, եւ դպրոցը երեք տարի գոյութիւն ունենալուց յետոյ փակուեցաւ: Այդ անցքը խիստ դառն կերպով ազդեց տէր հօր սրտին, երբ իր գործունէութեան հէնց առաջին քայլում հանդիպեց այդ տեսակ անյաջողութեան: Բայց նա համբերող եւ երկայնամիտ մարդ էր, նա վշտացաւ, բայց չյուսահատուեցաւ:

Գիշեր էր, երբ մենք հասանք Այգեստան: Տէր հայրը հրաւիրեց մեզ իր տունը ընթրիք ուտելու: Ասլանը, որ սովորութիւն չունէր այդ տեսակ հրաւէրքներ ընդունել, սիրով յանձն առեց նրա առաջարկութիւնը: Ընթրիքն անցաւ բաւականին զուարճալի կերպով. տէր հայրը պատմում էր զանազան